

ՀԻՆՊ ՀԱՋԱՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ.

ՍԱՍՈՒՆԻ կոտորածի բոթարեր լուրը կայծակի արագութեամբ տարածուեց ամեն տեղ եւ ցնցեց մեզ բոլորին: Կատարուեց բռնակալ տէրութեան վաղեմի իղձը. Սասունի առիւծները ընկան անհաւասար կռուի մէջ. Սասունը՝ կտրիճների այդ անվեհէր հայրենիքը այժմ աւերուած է եւ ներկայանում է նահատակների մի մեծ գերեզման...

Հայեր, արիւն էիք պահանջում ժողովրդից նա արիւն թափեց. կասկածներ էիք յայանում նրա կուռելու ընդունակութեան մասին՝ հերոսութեան անթիւ ապացոյցներ տրուեց. խնայում էիք նրանից ձեր օգնութիւնը. եւ նա՛ ամբողջ աշխարհին լսելի արեց իր ձայնը:

Եւրոպան, շահասէր, դիպլոմատ Եւրոպան անգամ վրդովուեց մուսուլմանների կատարած այդ գապանային արիւնհեղութիւններից. Եւրոպան նոր պլիխ ընկաւ, որ Հայաստանում այժմ կատարվում են «Բուլղարական սարսափները»... Սասունի լեռներում ընկած 5000 ՀԱՅԻ ԴԻԱԿՆԵՐԸ, նոցա արեան հեղեղով ներկուած քարերն ու ապառաժները բողբոջում են երկնքին ու արդարութիւն պահանջում: Արդարութիւն... խեղճ նահատակներ... Դուք մեռաք հաւատով, մեռաք որուորում այն յոյսով, որ ձեր արիւնը գութ կը շարժէ մարդոց սրտերի մէջ. դուք մեռաք, որ ձեր կենդանի մնացած եղբայրների համար արդարութիւն վաստակէք: Բայց դուք չը գիտէք, որ աշխարհիս արդարութիւնը սուրն է, հրացանն է, թնդանօթն է:

Հայեր, օգտուելու ենք դոնէ այժմ այս սոսկալի, միեւնոյն ժամանակ եւ իւրրատական դասից, որ առլիս են մեզ բռնակալները. հասկանալու ենք վերջապէս, որ Հայաստանում այսօր դէմ առ դէմ կանգնած են երկու թշնամի տարրեր. մի կողմից՝ բռնակալ թիրքերը իր աւաղակ քրդերով ու նիզամներով. միւս կողմից՝ անգէն, անօգնական եւ իր ազատութեան համար նահատակուող հայ ժողովուրդը. միւր վճռել է՝ իսպառ

ընաջինջ անել հային, միւսը՝ կուռել մինչեւ վերջը, մինչեւ իր արեան վերջին կաթիլը...

Պատմական հանդամանքների անխուսափելի հոսանքը մղում է մեզ դէպի կռիւ, եւ խաղաղութիւնը մեր եւ տաճիկների մէջ այլեւս անդառնալի է: Այսօր Սասուն, վաղը Մուշ, Վան, Էրզրում, Բաղէշ եւ այլն ոտքի են կանգնելու. ազատութեան կռիւը ընդհանուր է. եւ հրդէհի պէս բռնկելու է շուտով ամբողջ Հայաստանը: Պատրաստուենք, հայեր, այս մեծ եւ փառաւոր կռուի համար. մասնէնք այդ կռուի մէջ, առնենք մեզ վրայ նրա բոլոր ծանրութիւնը, չը վհատենք, չը թուլանանք:

Գրգոների, Շաքէների եւ այլ հազարաւոր նահատակների օգիները սաւառնում են մեզ վերայ եւ յորդորում են մեզ նոյնքան սիրել, պաշտպանել անբաղդ հային, որքան իրենք են սիրել:

Մե՛նք, հայ յեղափոխականներս՝ տեսնելով մեր եղբայրների նահատակութիւնը, նախանձում ենք նրանց փառքին, ամոստում ենք, որ մենք էլ նրանց հետ չը մեռանք, ամոստում ենք, որ մեր արիւնը չը կարողացանք խառներ Սասունի հերոսների արեան հետ: Եւ այժմ, որովհետեւ մենք կենդանի ենք, որովհետեւ մենք ընդունակ են ըզգալու եւ հասկանալու այդ մեծներ, մենք երգվում ենք ամբողջ ազգութեան առաջ, չը խոտորել մեր ճանապարհից, երկութի կամքով եւ հաստատամտութեամբ յառաջ տանել յեղափոխութեան գործը, մինչեւ որ ամբողջ ժողովուրդը կը միանայ մեզ հետ, մինչեւ որ նա բնգունակ կը լինի ո՛չ միայն զոհվելու, այլ եւ յաղթելու իր թշնամուն... Սասունի լեռներում ընկած 5000 սուրբ նահատակները թո՛ղ վկայ լինեն մեր այս երդմանը: Վրիժու կրակը երբէք չէ մարելու մեր մէջ...

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ»

1894, 15 Նոյեմբերի, Վիէննա